Հավելված 9.1-ի ձևեր
Ձև 1
ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«___»_____-ի 202__ թվականի N___-Լ

---------- ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 20-- **ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ** (**ՆԵՐ**) **ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետը՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 20-- թվականի ամենամյա գույքագրում անցկացնելու նպատակով.

1. Ստեղծել գույքագրման կենտրոնական հանձնաժողով, հետևյալ կազմով՝
Կենտրոնական հանձնաժողովի նախագահ՝----------
Կենտրոնական հանձնաժողովի անդամներ՝ ----------

---

2. Գույքագրման աշխատանքները համայնքապետարանում, համայնքային հիմնարկներում, համայնքի մասնակցությամբ առևտրային և համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում փաստացի իրականացնելու համար ստեղծել գույքագրման աշխատանքային հանձնաժողով (հանձնաժողովներ), հետևյալ կազմով.

1) Գույքագրման աշխատանքային առաջին հանձնաժողով՝
Աշխատանքային առաջին հանձնաժողովի նախագահ՝ ----------
Աշխատանքային առաջին հանձնաժողովի անդամներ՝ ----------

---

2) Գույքագրման աշխատանքային երկրորդ հանձնաժողով՝

Աշխատանքային երկրորդ հանձնաժողովի նախագահ՝ ----------
Աշխատանքային երկրորդ հանձնաժողովի անդամներ՝ ----------

---

3. Ներգրավված աուդիտորական կամ մասնագիտական խորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպության անվանումը ----------
---
Կազմակերպության ներկայացուցչի անունը, ազգանունը ----------

4. Գույքագրման առաջին հանձնաժողովը պետք է իրականացնի հետևյալ ---------- (նշել համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններների անվանումները) համապատասխան ակտիվների (պարտավորությունների) գույքագրում:
5. Գույքագրումը սկսել « » ------- 20—թ-ին, ավարտել « » ----------20—թ-ին:
6. Գույքագրման տվյալները հանձնել հաշվապահություն ոչ ուշ, քան « » ---------- 20--թ-ը:
7. Սույն կարգադրության կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել _____-ին:
8. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____

(**Կ. Տ.**)

Ձև 2
Հաստատում եմ
_____ համայնքի ղեկավար
_____
Կ.Տ
« » _____ 20_ _թ.

ՑԱՆԿ N 1

_____ ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի նպատակային նշանակությունը, հոցատեսքը	Հողամասի գործառնական նշանակությունը	Հողամասի ընդհանուր նկարագիրը	Հողամասի նկատմամբ իրավունքների ծագման հիմքերը	Պետական գրանցման ներկայացնելու ժամանակացույցը			
						Առաջին եռամսյակ	Երկրորդ եռամսյակ	Երրորդ եռամսյակ	Չորրորդ եռամսյակ

ՑԱՆԿ N 2

_____ ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Շենք-շինության անվանումը	Շենք-շինության գտնվելու վայրը, հասցեն	Շենք-շինության ընդհանուր նկարագիրը	Շենք-շինության նպատակային և գործառական նշանակությունը	Շենք-շինությունը տիրապետողի տվյալները	Շենք-շինության նկատմամբ իրավունքների ծագման հիմքերը	Պետական գրանցման ներկայացնելու ժամանակացույցը			
							Առաջին եռամսյակ	Երկրորդ եռամսյակ	Երրորդ եռամսյակ	Չորրորդ եռամսյակ

ՑԱՆԿ N 3

_____ ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ և ՏԵԽՆԻԿԱՅԻ

N	Տրանսպորտային միջոցի, տեխնիկայի անվանումը	Տրանսպորտային միջոցի, տեխնիկայի ընդհանուր նկարագիրը	Տրանսպորտային միջոցը, տեխնիկան տիրապետողի տվյալները	Գույքի նկատմամբ իրավունքների ծագման հիմքերը	Պետական գրանցման ներկայացնելու ժամանակացույցը			
					Առաջին եռամսյակ	Երկրորդ եռամսյակ	Երրորդ եռամսյակ	Չորրորդ եռամսյակ

Ձև 3

ՊԱՏՎԵՐ N__

_____ համայնքի կարիքների համար չափագրական աշխատանքների գնման պայմանագիր (ԱՁԲ)
N_____

Պատվիրատու _____-ը
պատվիրում է, իսկ
Կատարող _____-ը
կատարում է հետևյալ գույքի չափագրական աշխատանքները՝

N	**Գույքի անվանումը** (**հողամաս**, **շենք-շինություն**,)	**Գույքի գտնվելու վայրը**, **հասցեն**	**Գույքի ընդհանուր նկարագիրը**	**Գույքը տիրապետողի տվյալները**	**Գույքի նկատմամբ իրավունքների ծագման հիմքերը**	**Այլ նշումներ**

Կատարողը պարտավորվում է չափագրման արդյունքները հանձնել մինչև
« » _____ -ի 20__թ

Պատվիրատու՝ _____
Կատարող՝ _____

« » _____ -ի 20__թ

Ձև 4

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ
_____ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » _____ 20__ թվականի N

_____ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերի, (նշվում են նաև տվյալ համայնքի գլխավոր հատակագիծը և/կամ համայնքի այլ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր հաստատելու և/կամ պետական հողերն անհատույց համայնքին փոխանցելու մասին կառավարության որոշումները), հիմք ընդունելով _____ համայնքի ավագանու 20_ թվականի _____ __-ի N __ որոշմամբ հաստատված 20__ թվականի գույքի կառավարման ծրագիրը՝

1. Հաստատել _____ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի թվով ____ հատակագծերը (կցվում են):
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն՝ ուժի մեջ մտնելու օրվանից 5-օրյա ժամկետում, ներկայացնել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանում՝ իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ----------

20--թ. --------- « »
համայնք

Հավելված
_____ համայնքի ղեկավարի
20_ թվականի _____ __-ի
N ____ որոշման

_____ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ

N	**Հողամասի գտնվելու վայրը**	**Հողամասի մակերեսը (ք.մ/հա)**	**Հողամասի նպատակային նշանակությունը, հողատեսքը**	**Հողամասին տրամադրվող հասցեն**
1	2	3	4	5

Ձև 5
ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » _____ 20__ թվականի N

_____ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերի, (նշվում է նաև համայնքի սեփականության գույքի ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը), հիմք ընդունելով _____ համայնքի ավագանու 20_ թվականի _____ __-ի N __ որոշմամբ հաստատված 20__ թվականի գույքի կառավարման ծրագիրը՝

1. Հաստատել _____ համայնքի սեփականություն հանդիսացող շենք-շինությունների թվով ____ հատակագծերը (կցվում են):
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շենք-շինություններին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն՝ ուժի մեջ մտնելու օրվանից 5-օրյա ժամկետում, ներկայացնել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանում՝ իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ----------

20--թ. --------- « »
համայնք

Հավելված
_____ համայնքի ղեկավարի
20_ թվականի _____ __-ի
N ____ որոշման

_____ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ

N	**Շենք-շինության գտնվելու վայրը**	**Շենք-շինության մակերեսը (ք.մ/հա)**	**Շենք-շինության գործառական նշանակությունը**	**Շենք-շինությանը տրամադրվող հասցեն**
1	2	3	4	5

Ձև 6

ՊԱՏՎԵՐ N__

_____ համայնքի կարիքների համար գույքի գնահատման աշխատանքների գնման պայմանագիր « »
_____ -ի 20__թ-ի (ԱՁԲ) N_____

Պատվիրատու _____-ը
պատվիրում է, իսկ
Կատարող _____-ը
կատարում է հետևյալ գույքի գնահատում՝

N	**Գույքի անվանումը**	**Գույքի գտնվելու վայրը, հասցեն**	**Գույքի ընդհանուր նկարագիրը, սահմանափակումները**	**Գույքը տիրապետողի տվյալները**	**Գույքի նկատմամբ իրավունքների ծագման հիմքերը**	**Այլ նշումներ**

Պատվիրատուն կատարողին տրամադրում է գույքի նկատմամբ իրավունքները հավաստող (անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ փաստաթղթերի) փաստաթղթի լուսապատճենը:
Կատարողը պարտավորվում է գնահատման հաշվետվությունը պատվիրատուին հանձնել մինչև « » _____ -ի 20__թ-ը:

Պատվիրատու՝ _____
Կատարող՝ _____
« » _____ -ի 20__թ

Ձև 7
ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«___»_____-ի 20__ թվականի N___-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով _____ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ _____ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության _____ մարզի _____ համայնքի սեփականությունը հանդիսացող թվով՝ նշվում է քանակը տրանսպորտային միջոցները օտարել աճուրդով:
2. Սահմանել տրանսպորտային միջոցների մեկնարկային գները համաձայն «(նշվում է ՍՊԸ-ի անունը» ՍՊԸ-ի կողմից տրված «_____ համայնքին պատկանող թվով՝ նշվում է քանակը տրանպորտային միջոցների շուկայական արժեքների գնահատման» նշվում է օրը, ամիսը, տարին նշվում է համարը հաշվետվության՝ համաձայն հավելվածի:

Կողմ (__)	**Դեմ** (__)	**Ձեռնպահ** (__)
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____

(**Կ. Տ.**)

Հավելված
_____ համայնքի ավագանու
«___»_____-ի 20__ թվականի
N___-Լ որոշման

Հայաստանի Հանրապետության ------- մարզի --------- համայնքի սեփականությանը հանդիսացող, աճուրդ վաճառքով օտարվող տրանսպորտային միջոցների մեկնարկային գները ու պայմանները

N	**Տրանսպորտային միջոցի մակնիշը**	**Պետական համարանիշը**	**Թողարկման տարեթիվը**	**Շարժիչի հզորությունը /Կվտ, ՁՈՒ/**	**Մեկնարկային գինը**
1					
2					
3					

Ձև 8

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«___»_____-ի 20__ թվականի N___-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ «_____ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ (ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ) ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և _____ -ի համայնքի «_____ կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկի (կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպության) կանոնադրության -- -րդ գլխի -- -րդ կետի դրույթներով՝

_____ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Թույլատրել «_____ կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկին (կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը) _____ համայնքի սեփականություն հանդիսացող և հիմնարկին (կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված տեխնիկան և տրանսպորտային միջոցները ըստ անհրաժեշտության տրամադրել վարձակալության:
2. Սահմանել վարձակալության տրամադրվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վարձավճարների չափերը և պայմանները՝ համաձայն հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (__)	**Դեմ** (__)	**Ձեռնպահ** (__)
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____

(**Կ. Տ.**)

Հավելված
_____ համայնքի ավագանու
«___»_____-ի 20__ թվականի
N___-Լ որոշման

_____ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ «_____ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ (ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ) ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ, ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԷՔՍԿԱՎԱՏՈՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ԶԻԼ 130 (ՋՐՑԱՆ), ԿԱՄԱԶ 55111 (ԻՆՔՆԱԹԱՓ)) ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. **Հացահատիկի ցանքս** 1 **հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը**

1) Համայնքի տարածքում՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,
(նշվում է տառերով)

2) Համայնքի տարածքից դուրս՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,
(նշվում է տառերով)

2. **Պարարտանյութի ցրում** 1 **հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը**.

1) Համայնքի տարածքում՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,
(նշվում է տառերով)

2) Համայնքի տարածքից դուրս՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,
(նշվում է տառերով)

3. **Վար** 1 **հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը**.

1) Համայնքի տարածքում՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,
(նշվում է տառերով)

2) Համայնքի տարածքում (անմշակ տարածք)՝---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,
(նշվում է տառերով)

3) Համայնքի տարածքից դուրս՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,
(նշվում է տառերով)

4) Համայնքի տարածքից դուրս (անմշակ տարածք)՝---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,
(նշվում է տառերով)

4. **Թունաքիմիկատի ցրում** 1 **հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը**.

1) Համայնքի տարածքում՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,
(նշվում է տառերով)

2) Համայնքի տարածքից դուրս՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,
(նշվում է տառերով)

5. **Վարելահողի տափանում** (**դիսկաբորոն**) 1 **հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը**.

1) Համայնքի տարածքում՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,

(նշվում է տառերով)

2) Համայնքի տարածքից դուրս՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,

(նշվում է տառերով)

6. **Հունձ** 1 **հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և կոմբայնավարի ծառայության վճարը**.

1) Համայնքի տարածքում ՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,

(նշվում է տառերով)

առանց ծղոտի մանրացման, իսկ մանրացնելու դեպքում՝ ------- (_____ **հազար**) ՀՀ

(նշվում է տառերով)

դրամ,

2) Համայնքի տարածքից դուրս՝ ---------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,

(նշվում է տառերով)

առանց ծղոտի մանրացման, իսկ մանրացնելու դեպքում --------- (_____ **հազար**) ՀՀ

(նշվում է տառերով)

դրամ,

7. **Բազմաֆունկցիոնալ էքսկավատորի մեկ ժամվա համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստ-օպերատորի ծառայության վճարը**.

1) Համայնքի տարածքում և տարածքից դուրս՝ --------- (_____ **հազար**) ՀՀ

(նշվում է տառերով)

դրամ,

8. **Ձիլ** 130 (**ջրցան**) *

1) մեկ երթը՝ --------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,

(նշվում է տառերով)

2) մեկ օրը՝ --------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,

(նշվում է տառերով)

9. **Կամազ** 55111 (**ինքնաթափ**) *

1) մեկ կիլոմետրը՝ --------- (_____ **հազար**) ՀՀ դրամ,

(նշվում է տառերով)

2) մեկ օրը՝ --------- (_____ **հազար**) ՀՀ դրամ:

(նշվում է տառերով)

***Ծանոթություն՝**

Վառելիքը ապահովում և շահագործման ընթացքում առաջացած տեխնիկական թերությունները վերացնում է վարձակալը:

Վարձավճարի չափը գործում է _____ մարզի տարածքում:

Աշխատակազմի քարտուղար՝ _____

(**անունը**, **ազգանունը**)

Ձև 9

ՑԱՆԿ

_____ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ (ՏԵԽՆԻԿԱՅԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ)

հ/հ	Տեխնիկայի, տրանսպորտային միջոցի անվանումը և տեխնիկական համառոտ բնութագիրը	Թողարկման տարեթիվը	Ձեռքբերման տարեթիվը	Համարը		Փաստացի (քանակը)	Նշումներ
				Գույքային	Գործարանային		
1	2	3	4	5	6	7	8
					Ընդամենը		

Ձև 10

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
_____ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ _____ ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

N	Ինքնակամ շինության գտնվելու վայրը	Ինքնակամ շինության ընդհանուր նկարագիրը /արտաքին զննության արդյունքում/	Ինքնակամ շինության գործառնական նշանակությունը /բնակեցված, փակ, գործող, չգործող/	Ինքնակամ շինությունն իրականացրած անձի անուն,ազգանուն /անհայտ լինելու դեպքում՝ նշում այդ մասին/	Ինքնակամ շինությունն իրականացրած անձի կոնտակտային տվյալները /բնակության հասցե, հեռախոս/	Ինքնակամ շինության հայտնաբերման օր,ամիս,տարի

Ձև 11
Հաստատում եմ
_____ համայնքի ղեկավար

_____

Կ.Տ

« » _____ 20_ _թ.

ՑԱՆԿ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

_____ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ _____ ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Ինքնակամ շինության գտնվելու վայրը	Ինքնակամ շինության գործառնական նշանակությունը	Ինքնակամ շինության օրինականացման և տնօրինման ժամանակացույցը			
			Առաջին եռամսյակ	Երկրորդ եռամսյակ	Երրորդ եռամսյակ	Չորրորդ եռամսյակ

Ձև 12

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » _____ 20__ թվականի N

_____ ՀԱՄԱՅՆՔԻ (ՊԵՏՈՒԹՅԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ (ՊԵՏՈՒԹՅԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով _____ համայնքի ավագանու 20__ թվականի _____ -ի N__ որոշմամբ հաստատված համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 20— թվականի տարեկան ծրագրի N__ հավելվածը.

1. _____ համայնքի (նշվում է վայրը) գտնվող համայնքի (պետության) սեփականություն հանդիսացող ____ քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված ____ քառակուսի մետր արտաքին մակերեսով և _____ քառակուսի մետր ներքին մակերեսով (նշվում է շինության նպատակային նշանակությունը) կառուցապատման (նշվում է շինության գործառնական նշանակությունը) համարել _____ համայնքի (պետության) սեփականությունը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ _____:

3. Հաստատել սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի հատակագծերը (կցվում են):

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 5-օրյա ժամկետում, ներկայացնել Կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ----------

20--թ. --------- « »

համայնք

Ձև 13

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » _____ 20__ թվականի N

_____ ՀԱՄԱՅՆՔԻ (ՊԵՏՈՒԹՅԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՉՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ և 46-րդ կետերի, հիմք ընդունելով (նշվում է վարույթի իրականացման պատասխանատուի անունը)-ի 20__ թվականի _____ -ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինության պահպանումը՝ (նշվում է թվարկված հիմքերից փաստացի արձանագրվածը.
- խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,
- վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
- շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
- շինությունը կառուցված է ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,
- շինությունը կառուցված է քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,
- առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք) .

1. _____ համայնքի (պետության) սեփականություն հանդիսացող (հիմք՝ նշվում է իրավունքի պետական գրանցման վկայալանի տվյալները) _____ հասցեում գտնվող _____ կողմից ինքնակամ կառուցված շինությունը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման:

2. Սույն որոշման մասին ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնել ինքնակամ կառույցն իրականացրած _____ -ին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ----------

20--թ. --------- « »
համայնք

Ձև 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ
_____ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

« » --------- 20--թ. N__

(Հասցեատիրոջ
անուն, ազգանուն,
հասցե)

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Հարգելի _____ յան
Դուք տեղեկացվում եք, որ _____ համայնքի (պետության) սեփականություն հանդիսացող _____ հասցեում գտնվող հողամասում Ձեր կողմից ինքնակամ կառուցված շինությունը չի կարող ճանաչվել օրնական և այն ենթակա է քանդման:

Առաջարկվում է ____ -օրյա ժամկետում Ձեր միջոցներով քանդել ինքնակամ շինությունը և համայնքային (պետական) հողամասը բերել նախկին տեսքի: Սահմանված ժամկետում Ձեր կողմից չքանդվելու դեպքում, այն կքանդվի համայնքի միջոցներով և Ձեզանից կպահանջվի փոխհատուցել համայնքի կրած վնասները:
Կից ներկայացվում է _____ համայնքի ղեկավարի « » _____ 20_ թ-ի N_ որոշման պատճենը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ----------

Ձև 15

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » _____ 20__ թվականի N

_____ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ _____ ՀԱՄԱՅՆՔԻ (ՊԵՏՈՒԹՅԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հիմք ընդունելով (<u>նշվում է վարույթի իրականացման պատասխանատունի անունը</u>)-ի 20__ թվականի _____ -ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

1. _____ համայնքի (պետության) սեփականություն հանդիսացող <u>(հիմք՝ նշվում է իրավունքի պետական գրանցման վկայալանի տվյալները)</u> _____ հասցեում գտնվող ____ քառակուսի մետր

մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված ____ քառակուսի մետր արտաքին մակերեսով և _____ քառակուսի մետր ներքին մակերեսով (նշվում է շինության նպատակային նշանակությունը) կառուցապատման (նշվում է շինության գործառնական նշանակությունը) -ը ճանաչել օրինական:

2. Հիմք ընդունելով սույն որոշումը, գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած _____ ին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ----------

20--թ. --------- « »

համայնք

Ձև 16

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« » _____ 20__ թվականի N

_____ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ _____ ՀԱՄԱՅՆՔԻ (ՊԵՏՈՒԹՅԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հիմք ընդունելով (նշվում է վարույթի իրականացման պատասխանատուի անունը)-ի 20__ թվականի _____ -ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

1. _____ համայնքի (պետության) սեփականություն հանդիսացող (հիմք՝ նշվում է իրավունքի պետական գրանցման վկայալանի տվյալները) _____ հասցեում գտնվող ____ քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված ____ քառակուսի մետր արտաքին մակերեսով և _____ քառակուսի մետր ներքին մակերեսով (նշվում է շինության նպատակային նշանակությունը) կառուցապատման (նշվում է շինության գործառնական նշանակությունը) -ը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության պահպանման ու սպասարկման համար առանձնացված (նշվում է համայնքի գլխավոր հատակագծին կամ այլ քաղաքաշինական փաստաթղթերին

համապատասխանող հողամասի գործառնական նշանակությունը) կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված, որպես (նշվում է հողամասի փոփոխված գործառնական նշանակությունը) կառուցապատման հողամաս:

2. Հիմք ընդունելով սույն որոշումը, գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած _____ ին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ----------

20--թ. --------- « »
համայնք

Ձև 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

« » --------- 20--թ. N__

(Հասցեատիրոջ անուն, ազգանուն, հասցե)

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի պահանջները՝ Ձեզ առաջարկվում է նախապատվության իրավունքով գնել _____ համայնքի սեփականություն համարվող _____հասցեում գտնվող Ձեր կողմից ինքնակամ կառուցված շինությունը՝ _____ քառակուսի մետր արտաքին մակերեսով և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված _____ քառակուսի մետր մակերեսով հողամասը: Շինության մեկ քառակուսի մետրի արժեքը սահմանված է (թվերով) (տառերով) դրամ, իսկ հողատմասի մեկ քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ (թվերով) (տառերով) դրամ:

Սույն առաջարկը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում խնդրում ենք գրավոր հայտնել առաջարկն ընդունելու կամ չընդունելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ----------

Ձև 18

ՀՀ _____ մարզի _____ համայնքի
ղեկավար պարոն_____ -ին

_____
հասցե, հեռախոս, էլ. փոստ
_____ -ից

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույնով հայտնում եմ իմ համաձայնությունը Ձեր « » _____ 20__ թ-ի N__ առաջարկում կատարված հաշվարկների գներով ձեռք բերել _____ համայնքի _____ հասցեում գտնվող իմ կողմից ինքնակամ կառուցված շինությունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված հողամասը:

_____ (անուն, ազգանուն)
(ստորագրություն)

Ձև 19

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« » _____ 20__ թվականի N

_____ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ _____ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշումների, (նշվում են նաև տվյալ համայնքի գլխավոր հատակագիծը և/կամ համայնքի այլ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր հաստատելու և/կամ պետական հողերն անհատույց համայնքին փոխանցելու մասին կառավարության որոշումները), հիմք ընդունելով _____ համայնքի ավագանու 20_ թվականի _____ __-ի N __ որոշմամբ հաստատված 20__ թվականի գույքի կառավարման ծրագիրը, (նշվում են նաև հասցե տրամադրելու և համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճարները սահմանելու մասին տվյալ համայնքի ավագանու նորմատիվ որոշումները), հաշվի առնելով ինքնակամ կառույցն իրականացրած _____-ի համաձայնությունը.

1. _____համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ նշվում են իրավունքի պետական գրանցման վկայականի տվյալները) _____հասցեում գտնվող շինությունը՝ _____ քառակուսի մետր արտաքին մակերեսով, _____ քառակուսի մետր ներքին մակերեսով և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված _____ քառակուսի մետր մակերեսով (նշվում է հողամասի գործառնական նշանակությունը) կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած _____ -ին:

2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկներով՝

1) շինության 1 քառակուսի մետրի համար՝ (թվերով) (տառերով) դրամ (տարածագնահատման ___-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ ___).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ (թվերով) (տառերով) դրամ:

3. _____ -ը պարտավոր է համայնքի բյուջե վճարել՝

1) համայնքապետարանի _____ հաշվեհամարին՝ (թվերով) (տառերով) դրամ՝ շինության գինը.

2) համայնքապետարանի _____ հաշվեհամարին՝ (թվերով) (տառերով) դրամ՝ հողամասի գինը.

3) համայնքապետարանի _____ հաշվեհամարին՝ (թվերով) (տառերով) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար, (թվերով) (տառերով) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է կառույցն իրականացրած _____ -ի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 30-օրյա ժամկետում որոշման 3-րդ կետում սահմանված գումարները համայնքի բյուջե չվճարելու, ինչպես նաև՝ 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ----------

20--թ. --------- « »

համայնք

Ձև 20

ՏԵՂԵԿԱՆՔ

ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ------- ---------- ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ

«_____» _____ 20 _____թ.

1.	Անշարժ գույքի օգտագործման (անհատույց, վարձակալություն տրամադրված գույքի ընդհանուր մակերեսը, քառ. մ)	
2.	Օգտագործողի անունը (անվանումը) և կազմակերպաիրավական ձևը	
3.	Օգտագործման տրամադրման հիմքերը	
4.	Օգտագործման տրամադրված շենքի, շինության, տարածքի, հողամասի մակերեսը (քառ. մ, հա)	
5.	Օգտագործման պայմանագրի կնքման ամսաթիվը	
6.	Օգտագործման պայմանագրի գործողության ժամկետները	
7.	Օգտագործման իրավունքի պետական գրանցման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի համարը	
8.	Վարձակալական վճարի մեծության չափը (ամսական, տարեկան) դրամ	
9.	Վարձակալի կողմից մինչև մոնիթորինգի անցկացումը համայնքի բյուջե վճարված գումարի չափը, դրամ	
10.	Ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման ամսաթիվը	
11.	Ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության ժամկետը	
12.	Ծառայությունների մատուցման վճարի չափը (ամսական, տարեկան) դրամ	
13.	Ծառայություններ մատուցողի կողմից մինչև մոնիթորինգի անցկացումը համայնքի բյուջե վճարված գումարի չափը, դրամ	

Գույքը օգտագործող՝ _____

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ձև 21

ՏԵՂԵԿԱՆՔ

ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԱՐԺԱԿԱՆ --- ---------- ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ

«_____» _____ 20 _____թ.

1.	Շարժական գույքի մակնիշը, **պետական համարանիշը**,	
2.	Շարժական գույքի թողարկման տարեթիվը, ծարժիչի հզորությունը (Կվտ, ՁՈՒ)	
3.	Օգտագործողի անունը (անվանումը) և կազմակերպաիրավական ձևը	
4.	Օգտագործման տրամադրման հիմքերը	
5.	Օգտագործման պայմանագրի կնքման ամսաթիվը	
6.	Օգտագործման պայմանագրի գործողության ժամկետները	
7.	Օգտագործման իրավունքի պետական գրանցման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի համարը	
8.	Վարձակալական վճարի մեծության չափը (ամսական, տարեկան) դրամ	
9.	Վարձակալի կողմից մինչև մոնիթորինգի անցկացումը համայնքի բյուջե վճարված գումարի չափը, դրամ	
10.	Ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման ամսաթիվը	
11.	Ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության ժամկետը	
12.	Ծառայությունների մատուցման վճարի չափը (ամսական, տարեկան) դրամ	
13.	Ծառայություններ մատուցողի կողմից մինչև մոնիթորինգի անցկացումը համայնքի բյուջե վճարված գումարի չափը, դրամ	

Գույքը օգտագործող՝ _____

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ձև 22

ՏԵՂԵԿԱՆՔ

_____

(օգտագործողի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ---------- ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ

«_____» _____ 20 _____թ.

(լրացվում է հաշվետու ժամանակահատվածի յուրաքանչյուր շենքի, շինության համար առանձին՝ ելնելով համայնքային գույքի հաշվառման բազայից)

1.	Անվանումը և տեսակը (շենք (առանձին կանգնած կամ ստորաբաժանված), շինություն կամ անավարտ շինարարություն)	
2.	Գտնվելու վայրը (գտնվելու վայրը, հասցեն (մարզը, համայնքը, քաղաքը, գյուղը),	
3.	Գոտիականությունը	
4.	Ավարտվածության աստիճանը (մինչև 50%, 50%-ից մինչև 100%, 100%),	
5.	Շենքի, շինության շահագործման հանձնման տարեթիվը	
6.	Անշարժ գույքի նշանակությունը (արտադրական, վարչական, օժանդակ և այլն)	
7.	Շենքի, շինության շինանյութի տեսակը (քարից, երկաթբետոնյա կոնստրուկցիաներից, թեթևացված քարից և այլն)	
8.	Շենքի, շինության հարկայնությունը	
9.	Ընդհանուր մակերեսը (քառ. մ), այդ թվում՝	
10.	Անշարժ գույքի սպասարկման համար հատկացված հողամասի մակերեսը (հա)	
11.	Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, սեփականության իրավունքի	

	գրանցման վկայականի համարը	
12.	Անշարժ գույքի ծանրաբեռնված լինելը (վարձակալություն, սերվիտուտ, գրավ և այլն)	
13.	Անշարժ գույքի հաշվեկշիռ ընդունելու տարեթիվը	
14	Անշարժ գույքի վթարայնության աստիճանը	
15.	Օգտագործողի անունը (անվանումը) և կազմակերպաիրավական ձևը	
16.	Օգտագործման տրամադրման հիմքերը	
17.	Օգտագործման պայմանագրի կնքման ամսաթիվը	
18.	Օգտագործման պայմանագրի գործողության ժամկետները	
19.	Օգտագործողի կողմից փաստացի չօգտագործվող տարածքների մակերեսները (քառ. մ)	
20.	Անշարժ գույքի հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ),	
21.	Ընդհանուր օգտագործման տարածքի նկատմամբ բաժնային մասը և սպասարկման համար հատկացված հողամասի նկատմամբ բաժնային մասը (քառ. մ, հա)	
22.	Համայնքային հիմնարկներին, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված, համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց անհատույց օգտագործման համար տրամադրված և իրենց կանոնադրական գործառույթներին համապատասխան չօգտագործվող տարածքի մակերեսը (քառ. մ, հա)	

Գույքը օգտագործող՝ _____

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ձև 23

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

---------- **ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Մոնիթորինգի ենթակա

_____

(օգտագործող հիմնարկի, կազմակերպության, իրավաբանական և ֆիզիկական անձի անունը, անվանումը, հասցեն)

Մոնիթորինգի ժամկետը «_____» _____20 ____թ-ից «_____» _____ 20____ թ-ը

Մոնիթորինգն անցկացրել են _____

(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

Մոնիթորինգ իրականացնելու հիմքը (երը).

1. _____ ,
2. _____ :

Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել են Գույքի օգտագործման համապատասխանությունը ըստ հետևյալ փաստաթղթերի.

1. _____ ,
2. _____ ,
3. _____ :

Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել են Գույքի օգտագործման վիճակը բնութագրող ցուցանիշները և դրանց դինամիկան:
Մոնիթորինգի ընթացքում Գույքի օգտագործման բարելավման ուղղությունների վերաբերյալ կատարված առաջարկությունները.

1. _____ ,
2. _____ ,
3. _____ :

Չօգտագործվող կամ հիմնարկների և կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրական գործառույթներին համապատասխան չօգտագործվող Գույքի (այդ թվում տարածքների) հետագա տնօրինման վերաբերյալ առաջարկությունները.

1. _____ ,
2. _____ ,
3. _____

Մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ

_____ ,

(նշվում է սույն կարգի XIV-րդ գլխի * կետի պահանջների համապատասխանությունը և ցուցանիշների դինամիկայի գնահատականը)

_____ ,
_____ :

Ծանոթություն.

1. ստացա արձանագրության մեկ օրինակը՝

_____ ,
(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

2. Արձանագրության վերաբերյալ ունեմ առարկություն, որի համար կից ներկայացնում եմ բացատրություն.

_____ ,
(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)
_____ :

3. Հրաժարվում եմ ստանալ արձանագրության օրինակը

_____ :
(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

4. Լրացուցիչ նշումներ

_____ ,
_____ :

Արձանագրությունը բաղկացած է ____ էջից _____ օրինակից:

_____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

«_____» _____ 20 _____թ.

Ձև 24

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԻՃԱԿԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մոնիթորինգի ենթակա

_____
(Գույքի անվանումը, հասցեն)

Մոնիթորինգի ժամկետը «_____» _____20 ____թ-ից «_____» _____ 20____ թ-ը

Մոնիթորինգն անցկացրել են _____
(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

_____
(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

_____
(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

Մոնիթորինգ իրականացնելու հիմքը (երը).

1. _____ ,
2. _____ :

Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել են Գույքի վիճակը բնութագրող ցուցանիշները:

Մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ

_____ ,
(նշվում է Գույքի չօգտագործման պատճառները)

_____ ,
_____ :

Մոնիթորինգի ընթացքում Գույքի հնարավոր տնօրինման, օգտագործման վերաբերյալ առաջարկությունները.

1. _____ ,
2. _____ ,
3. _____ :

Արձանագրությունը բաղկացած է ____ էջից _____ օրինակից:

_____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

«_____» _____ 20 _____թ.

Ձև 25

ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ, ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ժամկետ	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի կատարման պատասխանատու(ներ)
…..		
…..		
…..		

Ձև 26

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

---------- ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 20-- ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/h	Ծրագրով նախատեսված միջոցառման անվանումը	Միջոցառման կատարման պատասխանատու անձի անունը, ազգանունը, պաշտոնը	Միջոցառման իրականացման արդյունքները	Միջոցառման չկատարման, այդ թվում սահմանված ժամկետում, պատճառները	Ծանոթություն
1	2	3	4	5	
2					
3					
4					
5					

Ձև 27

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՂ՝ _____ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Համաձայն _____ համայնքի ավագանու 20__ թվականի _____ __-ի N __-Ն որոշմամբ հաստատված «_____ համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի», 20— թվականի ———— —ին

ժամը 00:00-ին ——————— համայնքապետարանի նիստերի դահլիճում (կամ նշվում է այլ վայր) կկայանան հանրային բաց լսումներ՝ ——————— համայնքի 20—թվականի բյուջեի (կամ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության, կամ 20—թվականի հաշվետու տարում ——————— համայնքի 20—20-- թվականների զարգացման ծրագրի իրականացման հաշվետվության, կամ տեղական տուրքերի, վճարների, վարձավճարների 20—թվականի դրույքաչափերը սահմանելու և այլն) նախագծի քննարկման վերաբերյալ: Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք: Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք ——————— համայնքի պաշտոնական կայքում հրապարակված նախագծի վերաբերյալ մինչև 20-- թվականի ---------- ---ը կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել պաշտոնական կայքում հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել աշխատակազմին:

Հանրային քննարկման ներկայացվող նախագծերը տես՝ այստեղ:

Ձև 28

Հավելված N --
համայնքի ղեկավարի
---. ---------- -ի 20-- թ.
N -- -Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ---------- ՄԱՐԶԻ ----------
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԾՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ
(**ծածկագիր՝** 2.3- --)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության ---------- մարզի ---------- համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) գույքի կառավարման գծով գլխավոր մասնագետի (այսուհետ՝ գլխավոր մասնագետ) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբում:

2. Գլխավոր մասնագետին «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության ---------- մարզի ---------- համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

2.ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է քարտուղարին:

4. Գլխավոր մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5.Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է քարտուղարը կամ աշխատակազմի գլխավոր կամ առաջատար մասնագետներից մեկը՝ քարտուղարի հայեցողությամբ և համայնքի ղեկավարի համաձայնությամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում գլխավոր մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Գլխավոր մասնագետը քարտուղարի կամ գլխավոր կամ առաջատար մասնագետների բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Գլխավոր մասնագետը՝

ա) աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

բ) օժանդակում է աշխատակազմի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է աշխատակազմի աշխատանքների ծրագրմանը, իսկ քարտուղարի հանձնարարությամբ՝ նաև կազմակերպմանը.

գ) կատարում է քարտուղարի հանձնարարականները.

դ) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Գլխավոր մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Գլխավոր մասնագետը՝

ա) աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է աշխատակազմի քարտուղարի և աշխատակազմի այլ աշխատողների հետ.

բ) առանձին դեպքերում քարտուղարի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Գլխավոր մասնագետն իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Գլխավոր մասնագետը՝

ա) ունի տնտեսագիտություն կամ ֆինանսներ կամ հաշվապահական հաշվառում և աուդիտ կամ կառավարում կամ շուկայագիտություն (մարքեթինգ) կամ հողաշինարարություն, հողային կադաստր մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

բ) ունի ՀՀ Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286, ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 17-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների հիմնական միջոցների գույքագրման և վերագնահատման մասին» N 264-Ն որոշումների, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» N 102 հրամանի, ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի «Պետական կառավարչական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 787-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ. հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները սահմանելու մասին» N 2-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ. հունվարի 8-ի «Հանրային հատվածի կազմակերպություններում նոր հիմնական միջոցների և սկզբնական արժեքով հաշվառվող կենսաբանական ակտիվների մաշվածության հաշվարկման նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները սահմանելու մասին» N 3-Ն հրամանների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե) տիրապետում է (ազատ կարդում և կարող է բացատրվել) ---------- օտար լեզվի (լեզուների):

7. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.Գլխավոր մասնագետը՝

1) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,

2) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարին.

3) անհրաժեշտության դեպքում, քարտուղարի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

4) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

5) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է քարտուղարին.

6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.

7) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է ավագանու նիստերին ներկայացվող Գույքի կառավարման ոլորտի հետ կապված հարցերի նախագծերի նախապատրաստմանը.

8) քարտուղարի հանձնարարությամբ կազմում և համայնքի ղեկավարին, ավագանուն է ներկայացնում Գույքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերի հաստատման ավագանու որոշման, Գույքի կառավարման տարեկան ծրագրի հաստատման ավագանու որոշման նախագծերը.

9) քարտուղարի հանձնարարությամբ վերահսկում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործումը և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանումը.

10) քարտուղարի հանձնարարությամբ այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է աշխատակազմի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

11) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

12) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերի մշակման աշխատանքներին.

13) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերի մշակման աշխատանքներին.

14) սահմանված կարգով մրցույթով և աճուրդով տրամադրվող և օտարվող գույքի մեկնարկային վարձավճարների ու գների սահմանման նպատակով կատարում է ուսումնասիրություններ և ներկայացնում առաջարկություններ, իրականացնում է գույքի շուկայական գնահատման համար անհրաժեշտ աշխատանքներ.

15) քարտուղարի հանձնարարությամբ Գույքի կառավարման բնագավառի հետ կապված հարցերով դատարաններում հանդես է գալիս որպես մասնագետ կամ ներկայացուցիչ.
16) կատարում է տրամադրվող և օտարվող գույքի օգտագործման, վարձակալության և օտարման պայմանագրերի նախապատրաստման և կնքման համար հետ կապված աշխատանքներ.
17) իրականացնում է Գույքի կառավարման բնագավառում իրականացվող աշխատանքների նկատմամբ վերահսկողության աշխատանքներ.
18) քարտուղարի հանձնարարությամբ նախապատրաստում և ներկայացնում է համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, աշխատակազմի քարտուղարի հրամանների, Գույքի կառավարման ոլորտին վերաբերող ծրագրային փաստաթղթերի, պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծեր, կազմում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման ոլորտի նախագիծը և մասնակցում է համայնքային սեփականության գույքագրման աշխատանքներին.
19) քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հաշվետու տարում Գույքի կառավարման վերաբերյալ հնգամյա զարգացման ծրագրի իրականացման հաշվետվության կազմման աշխատանքները և հաշվետվության ներկայացումը համայնքի ղեկավարի քննարկմանը.
20) քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքի վարչական տարածքում տեղադրված արտաքին գովազդի մակերեսների գույքագրման և հաշվառման աշխատանքներ.
21) աշխատակազմի քարտուղարին և համայնքի ղեկավարին ներկայացնում է Գույքի կառավարման ոլորտում առաջացած խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն.
22) համայնքի քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխանների նախագծեր.
23) աշխատակազմի քարտուղարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին.
Գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Գլխավոր մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան: